ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» մայիսի 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՊԵՏԱԿԱՆ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԵՂԻՇԵ ԱՍԾԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» 1999 թվականի օգոստոսի 31-ի N551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն պետական, կուսակցական գործիչ Եղիշե Ասծատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի-24 հասցեում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Կրթության, մշակույթի, երիտասարդության
հետ տարվող աշխատանքների,
առողջապահության, սոցիալական
պաշտպանության, արտաքին կապերի,
Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
հարցերի մշտական հանձնաժողովի անդամ *Ա. Ասատրյան*

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ–ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԵՂԻՇԵ ԹԵՎՈՍԻ ԱՍԾԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման համար հիմք է հանդիսանում Եղիշե Ասծատրյանի երկարամյա աշխատանքային գործունեության ընթացքում զբաղեցրած այն պաշտոնները , որոնք իրենց նշանակությամբ զգալիորեն նպաստել են Հայաստանի կառուցման, տնտեսության զարգացման և բարգավաճման գործում:

Եղիշե Ասծատրյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է Երևանի ալյումինի գործարանի շինարարության պետից, աշխատել արդյունաբերության և տրանսպորտի բնագավառներում, եղել ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահ, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար, ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահի տեղակալ, ՀՍՍՀ կուսակցական–պետական վերահսկողության կոմիտեի նախագահ:

Բազմիցս ընտրվել է ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Արժանացել է բազմաթիվ պարգևատրումների, իսկ 2004թ.–ին՝ ծննդյան 90-ամյա հոբելյանի կապակցությամբ,«Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանի:

Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, արտաքին կապերի, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ա. Ասատրյան